ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 484

ք. Երևան «17» 02 2015 թ.

Գեղարքունիքի մարզպետարան, ք. Գավառ, Կենտրոնական հրապ. 3
արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի անվանումը,

ի դեմս Մարզպետ Բաղդասարի Մարգարյանի այսուհետ՝ «Պատվիրատու», որը գործում է
ազգանունը, անունը, պաշտոնը

/կանոնադրության, լիազորագրի/ հիման վրա մի կողմից, և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Պետրոսյանի այսուհետ՝ «Կատարող», որը գործում է ՀՀ օրենսդրության և կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է՝ յուրաքանչյուր տարի ***տեխնիկական անվտանգության փորձաքննություն*** /այսուհետ Ծառայություն/ իրականացնել և տալ փորձագիտական եզրակացություն՝ Պատվիրատուի կողմից շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտում /օբյեկտներում/ կամ շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտի/օբյեկտների/ նախագծային փաստաթղթերի, տեխնիկական անվտանգության վկայագրի, ինչպես նաև շահագործման համար նախապատրաստվող արտադրական վտանգավոր օբյեկտի/օբյեկտների/ նախագծային փաստաթղթերի վերաբերյալ.

	օբյեկտի անվանումը	օբյեկտի գտնվելու վայրը	փորձաքննության անվանումը	ԱՎՕ-ի N	տվյալներ	գործ.N	քանակը	արժեքը /ընդամենը/
1	Կաթսա	ք. Գավառ	տեխն./գր.	3/1-0378	164/18-223789-04	223789-04	2	98400
2		Կենտր. հրապ. 3				223790-08		
3								
4								

իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ փորձաքննության համար:

1.2. Կատարողը կարող է, իր որոշմամբ 'Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն'պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագիտական կրթություն և գիտելիք ունեցող մասնագետներից նշանակել սույն պայմանագրի 1.1. կ խումբ /այսուհետ՝ Փորձագետ/, որը իրականացնում է տեխնիկական անվտանգության փորձաքննություն և պատասխանատվություն է կրում իր կողմից տրված փորձագիտական եզրակացության հավաստիության համար:

1.3.Յուրաքանչյուր տարվա համար սույն Պայմանագրի 1.2. կետով սահմանված փորձագետ /փորձագետներ/ է նշանակվում՝ համաձայն հավելվածի:

1.4. Յուրաքանչյուր տարի Կատարողի կողմից սույն Պայմանագրի 1.1. կետով սահմանված Փորձաքննությունն իրականացվում է սույն Պայմանագրի 3-րդ մասով սահմանված գումարը Կատարողի հաշվարկային հաշվին մուտքագրվելուց հետո՝ տաս օրվա ընթացքում:

1.5. Փորձաքննության իրականացման դիմաց վճարի չափը, վճարման կարգը և ձևը որոշվում են սույն Պայմանագրով և չեն կարող կախվածության մեջ դրվել Պատվիրատուի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել Կատարողի կողմից Փորձաքննության իրականացման արդյունքում Պատվիրատուին տրամադրվող փորձագիտական եզրակացության բովանդակության վրա:

1.6. Յուրաքանչյուր տարի Փորձաքննության իրականացումը Կատարողի կողմից ավարտված է համարվում՝ Փորձագետի կողմից փորձագիտական եզրակացությունը, ընդունման-հանձնման ակտը ու հաշիվ ապրանքագիրը կազմելու և Պատվիրատուին ներկայացնելու պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փորձագետը պարտավոր է՝

2.1.1.Փորձաքննություն իրականացնել տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ պատշաճ որակով.

2.1.2. Փորձաքննություն իրականացնել ամբողջ ծավալով, սույն պայմանագրում նշված ժամկետում.

2.1.3. Փորձաքննության ավարտից հետո փորձագիտական եզրակացության մեկ օրինակը հանձնել Պատվիրատուին:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Փորձաքննության իրականացման ընթացքում Պատվիրատուից պահանջել՝

ա/ 'Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին'ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 'բ'կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայությանն առնչվող փաստաթղթերը /հրամաններ, կարգադրություններ, պայմանագրեր և այլն/:

բ/ արտադրական վտանգավոր օբյեկտի շինարարության, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերը,

գ/ արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագիրը,

դ/ արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված տեխնիկական միջոցների և տեխնոլոգիական սարքավորումների անձնագրերը, փորձարկման ակտերը, հավաստագրերը,

ե/ տեխնիկական կանոնակարգերը (ռեգլամենտները),

զ/ այլ նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերը.

2.2.2. Անարգել մուտք գործել արտադրական վտանգավոր օբյեկտի տարածք, տարածքում տեղակայված շենքերը, շինությունները:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Փորձաքննության իրականացման համար Կատարողին վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան գումար.

2.3.2. Փորձաքննության ընթացքում Փորձագետին տրամադրել սույն պայմանագրի 2.2.1. կետով սահմանված պահանջվող փաստաթղթերը.

2.3.3. Փորձաքննության ընթացքում Փորձագետին ապահովել անհատական պաշտպանության միջոցներով և Փորձաքննության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով,

2.3.4. Փորձաքննության ընթացքում Փորձագետին թույլատրել անարգել մուտք գործել արտադրական վտանգավոր օբյեկտի տարածք, տարածքում տեղակայված շենքեր, շինություններ.

2.3.5. Իր կողմից շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտը տարեկան առնվազն մեկ անգամ ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության, հիմք ընդունելով 'Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին'ՀՀ օրենքի 11-րդ Հոդվածի 6-րդ կետի պահանջը.

2.3.6. Արտադրական պատահարի կամ տեխնածին վթարի դեպքում արտադրական վտանգավոր օբյեկտը փորձաքննության ներկայացնել անկախ սույն Պայմանագրի 2.3.5 կետով նախատեսված ժամկետից՝ համաձայն 'Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին'ՀՀ օրենքի 11-րդ Հոդվածի 7-րդ կետի.

2.3.7. Կատարողի հետ կնքված պայմանագրի հիման վրա կազմակերպել՝ իր մոտ աշխատող ինժեներատեխնիկական եւ մասնագետ կադրերի ուսուցումը եւ որակավորումը:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Փորձաքննության անցկացման ընթացքում, Փորձաքննության մասնակից դարձնել 'Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին'ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 'բ'կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայությանը:

2.4.2. Փորձագետից պահանջել իրեն տրամադրել փորձագիտական եզրակացության օրինակը:

3. Պայմանագրի գինը

3.1. Սույն Պայմանագրի գինը յուրաքանչյուր տարվա համար կազմում է՝ 48400 (քառասունութ հազար չորս հարյուր) դրամ, այդ թվում փորձաքննության իրականացման գինը՝ 40333 դրամ, ԱԱՀ-ն՝ 8067 դրամ:
3.2. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գինը վճարվում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:
3.3. Յուրաքանչյուր տարվա համար փոխանցումը կատարվում է մինչև՝ նույն տարվա 19.02 ը:
3.4. Սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գինը ենթակա է փոփոխման արտադրական վտանգավոր օբյեկտների փոփոխության դեպքում:

4.Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պատվիրատուն սույն Պայմանագրի 3.2. կետում նշված ժամկետը խախտելու համար Կատարողին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար պայմանագրի արժեքի 0.15 տոկոսի չափով:
4.2. Պատվիրատուն սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելու դեպքում, պարտավոր է սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գնի 30 տոկոսը վճարել Կատարողին՝ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելուն հաջորդող երեք օրվա ընթացքում:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:
Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է **3 (երեք)** ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Փորձագետի կողմից Պատվիրատուին պատկանող /օգտագործվող/ արտադրական վտանգավոր օբյեկտում Փորձաքննության իրականացման ընթացքում, Պատվիրատուի կողմից ներկայացված հաշվառման քարտի հիման վրա, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցված և փաստացի գոյություն ունեցող տվյալների անհամապատասխանության դեպքում, Պայմանագիրը ենթակա է փոփոխության կամ լրացման:
7.2. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված և կնքված են կողմերի, կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմնագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.3. Սույն Պայմանագիրը կնքվում է **երեք տարի** ժամանակով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.Բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կազմակերպության անվանումը/ անուն ազգանուն

Հասցե գտնվելու վայրը/հաշվառման

08404767

(ՀՎՀՀ)/անձնագրային տվյալներ

Բանկային վավերապայմանները

(պաշտոնը/ստորագրությունը / անուն,ազգանուն,)

Կ.Տ

Կատարող

<<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Ջրաշատի 1
ՀՎՀՀ 01556354
<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ
163008140119 դրամային

Տնօրեն Վ. Պետրոսյան

Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ N 484 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման թիվ 484 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 1.3. կետով սահմանված՝ փորձագետ է նշանակվում՝

N	Փորձաքննության տարին	Փորձագետի անուն, ազգանունը	Փորձաքննության իրականացման ժամկետը
1.	2015թ	Ս. Գրիգորյան	20.02.2015թ
2.	2016թ		
3.	2017թ		

Սույն հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է Պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում:

Պատվիրատու

Ս. Գրիգորյան
/Ձեռնարկության անվանումը/ անուն ազգանուն

Հասցե գտնվելու վայրը/հաշվառման
084047687
(ՀՎՀՀ)/անձնագրային տվյալներ

Բանկային վավերապայմանները

/ Ս. Գրիգորյան /
(պաշտոնը/լիազորությունը / անուն, ազգանուն,)

Կ.Տ.

Կատարող

<<Տեխնիկական անվտանգության
ազգային կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Զրաշատի 1
ՀՎՀՀ 01556354
<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ
1630081460119 դրամային

Տնօրեն Ա. Պետրոսյան

Կ.Տ.